ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ

# ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻՑ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/3495/02/24 ք. Երևան
10 Մայիսի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, դատավոր Ս. Երիցյանի նախագահությամբ (այսուհետ նաև՝ Դատարան), քննարկելով, ըստ հայցի <<ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ>> ԱՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Հայցվոր) ընդդեմ <<Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն>> ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատասխանող), երրորդ անձ՝ <<ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ>> ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Երրորդ անձ)՝ ԵՋԷԿ-ԳՀՇՁԲ-24/18 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի թիվ 2 արձանագրությունը՝ <<ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ>> ԱՓԲԸ-ի հայտը մերժելու մասով, անվավեր ճանաչելու, որպես հետևանք՝ <<ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ>> ՓԲԸ-ին ընտրված/հաղթող մասնակից ճանաչելու արձանագրության 4-րդ կետը անվավեր ճանաչելու և ԵՋԷԿ-ԳՀՇՁԲ-24/18 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած ճանաչելու պահանջների մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑ

Դիմելով դատարան՝ Հայցվորի ներկայացուցիչը խնդրել է անվավեր ճանաչել ԵՋԷԿ-ԳՀՇՁԲ-24/18 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի թիվ 2 արձանագրությունը՝ <<ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ>> Ապահովագրան ՓԲԸ-ի հայտը մերժելու մասով, որպես հետևանք՝ անվավեր ճանաչել <<ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ>> ՓԲԸ-ին ընտրված/հաղթող մասնակից ճանաչելու արձանագրության 4-րդ կետը և ԵՋԷԿ-ԳՀՇՁԲ-24/18 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած ճանաչել:

Հայցադիմումը էլեկտրոնային համակարգով դատարան ներկայացվել է 06.05.2024 թվականին, կազմվել է թիվ ԵԴ2/3472/02/24 քաղաքացիական գործը, որը 06.05.2024 թվականին մակագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ս. Երիցյանին:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-3-րդ մասերի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:
Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:
Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:
Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:
Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, Դատարանը գտնում է, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն գլխի նորմերը տարածվում են էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով դատարանի և դատավարության մասնակիցների, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ անձանց կողմից իրականացվող գործողությունների վրա:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի <<բ>> ենթակետի համաձայն՝ սույն գլխի իմաստով՝ Համակարգն օգտագործող անձ է (են) համարվում՝ իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, գնումների հետ կապված վեճերով վարույթում պատասխանողները, ներկայացուցիչ հանդիսացող փաստաբանները, սնանկության գործով կառավարիչները, նոտարները և արտոնագրված հաշտարարները՝ անկախ Համակարգի միջոցով որևէ անգամ որևէ գործողություն կատարած լինելուց կամ չլինելուց:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բոլոր դատավարական փաստաթղթերը (հայցադիմում, դիմում, բողոք, պատասխան, դիրքորոշում, միջնորդություն և այլն) կազմվում և ներկայացվում են Համակարգի միջոցով՝ Համակարգի կողմից տրամադրվող գործիքակազմին և առաջադրվող պահանջներին համապատասխան, բացառությամբ պետական գաղտնիք կազմող տեղեկությունների, որոնք ներկայացվում են միայն նյութական եղանակով:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գրավոր ապացույցները ներկայացվում են դրանք սույն օրենսգրքով նախատեսված դատավարական փաստաթղթերին կցելու և Համակարգով ուղարկելու միջոցով:
Վերոգրյալի հաշվառմամբ Դատարանը գտնում է, որ պատասխանող <<Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն>> ՓԲԸ-ից պետք է պահանջել <<ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-24/18>> ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները, ընդ որում, ապացույցները պետք է ներկայացվեն էլեկտրոնային

համակարգի միջոցով (բացառությամբ պետական գաղտնիք կազմող տեղեկությունների):
Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.1-րդ, 124-րդ, 199-րդ և 200-րդ, 234.6-րդ հոդվածներով, Դատարանը

## ՈՐՈՇԵՑ

1. <<ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ>> ԱՓԲԸ-ի ընդդեմ <<Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն>> ՓԲԸ-ի, երրորդ անձ՝ <<ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ>> ՓԲԸ-ի՝ ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-24/18 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի թիվ 2 արձանագրությունը՝ <<ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ>> ԱՓԲԸ-ի հայտը մերժելու մասով, անվավեր ճանաչելու, որպես հետևանք՝ <<ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ>> ՓԲԸ-ին ընտրված/հաղթող մասնակից ճանաչելու արձանագրության 4-րդ կետը անվավեր ճանաչելու և ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-24/18 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած ճանաչելու պահանջների մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:

2. <<Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն>> ՓԲԸ-ից պահանջել դատարան ներկայացնել <<ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-24/18>> ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները, ընդ որում, ապացույցները պետք է ներկայացվեն **<u>էլեկտրոնային համակարգի միջոցով</u>** (**<u>բացառությամբ</u>** պետական գաղտնիք կազմող տեղեկությունների):
3. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը պատասխանող <<Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն>> ՓԲԸ-ից կողմից պետք է կատարվի սույն որոշումը ստանալուց հետո՝ **<u>հնգօրյա ժամկետում</u>**:
Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

**Դատավոր՝** Digitally signed by YERITSYAN SARGIS 3207830072 Date: 2024.05.10 **Սարգիս Երիցյան**

*Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով <u>"Էլեկտրոնային դատավարություն"</u> համակարգ՝ <u>cabinet.armlex.am</u>*